## 27. ՃԿՏԱԿՅԻՐԸ

Էս քաթը ես ըսկացալ ըմ իմ պապի Սլեյմանեն անա, իսկ ինքյն էլ ը̈րա̈ն պապի Առուստամեն անա։

Ըլա̈լ ա չիլա̈լ մին չենում մի հայտնի թաջիր ա ըլա̈լ։ Էս թաջիրը ը̈րա̈ն օղտերեն քյըրվանավը աշխարքը շոռ ա տամ և հասնըմ մինչև Հնդկաստան, Չինաստան, Միջին Ասիա և շատ տեղեր։

Էս թաջիրը մին դը̈նգավ քյարվանավ և ը̈րա̈ն ղուլլուղչիներավը քյնա̈լիս տեսնըմ ա մին ծառի տակեն էրկու ջա̈հիլ նստած։ Էս ջհիլներան մինը կյրըմ ա տամ ը̈րա̈ն հնգերին, իսկ հնգերն էլ էն կյրա̈ծը ճնջըմ ա։ Թաջիրը մոտանըմ ա և հրցնում.—Ա՛յ ջհլնե, էտ հինչ ը՞ք կյրըմ։ Ջհլներան մինը ասըմ ա.—Մունք մարթկանց հեռի ճկտակյիր ընք կյրըմ։ Թաջիրը ասըմա.—Մին ճկտակյիրը քանի՞ մանեթ ըք կյրըմ։ Էս կյրողը ասըմ ա.—Մին ճկտակյիրը հենգյ մանեթ ա, օղըմ ըս կյիրինքյ, օղըմ չէ՞ս կյիրինքյ հուչ։

Թաջիրը հենգյ մանեթ ա տամ և ասըմ ա, վեր ը̈րա̈ն հեռի մին ճկտակյիր կյրին։

Էս տղեքյը ըսկսում ըն թաջիրին ճկտակյիրը կյիրիլ։ Ընդահանք կյրըմ ըն.

«Թաջիր, տու հայտնի հարուստ մարթ ըս, ամմա խոխա չոնիս, վերշըմը քեզ էրկու տղա, մին ախճիգյ ա ըննա̈կան, ամմա մին ա̈, ըլա̈ծ հրստոթունըտ մին քյսիրու խոխա պիտի ուտեն։

Թոխտը կյա̈ըմ ըն, տամ թաջիրին։ Թաջիրը կա̈րթըմ ա և ասըմ.—Ա՛րա, ծեզ մատաղ, կալիքյ տասը մանեթ էլ տամ, միայն ճնջեցեքյ և նորից կյրեցեքյ։

էս կյրուղնեն ասըմ ըն.—Չէ՛, կյրածը ճնջվիլ չի, հինչ վեր կյիրվա՛լ ա, պրծալ ա։

Թաջիրը կզնվում ա, էտ կյրած ճկտակչիրը ճըղոտում և մին քանե պակաս խոսկ էլ ասըմ ըտահաց ու հրամայըմ քյարվանը առաչ քշին։

Քյարվանը շատ ա քյնում, թա խրեգյ, մին չենի քշտավ քյնի-լիս տեսնըմ ըն չեննին ղրաղեն մին ըտըժանե ծակ-ծուկ տոն և տանը կտրեն մին տղա նստած։ Թաջիրը տղեն պարգյում ա տամ և ասըմ.—Ա՛յ տղա, մեր քյարվանը հոքնալ ա, կթողի՞ս էս քշեր ծեր հայաթըմը դնջանան, էլի առավոտը ճանապարհ ըղնինի։

Էս քյասիր տղան շատ ուրխանըմ ա և թաջիրին լա՛վ ընթու-նում ա։ Էս քյա՛սիրը ուրխանըմ ա նրա համար, վեր ինքյը սոված ա, թաջիրը ու՛րան էլ մին կտոր հաց կտա։

Քյարվանը վեր ա կյամ, թաջիրը ծառաներին հրամայըմ ա ոչխար մորթին, հաց չինին, վեր հաց ուտին դնջանան, մինչա քյնին և նորից հղեն շարունակին։

Հաց ուտելիս թաջիրը էս քյա՛սիրին հացու հա՛մեցեքյ ա անըմ։ Էտ քյասիրը ու՛րան կնգանը և մին տարեկան մաղար տղա վերց-րած կյամ ա թաջիրին քշտեն նստում։ Մինչա վիր ուտըմ ըն, խմում, էտ քյա՛սիրի տղեն փո՛րը մայա յա ըղնում, ըսկսում ա չորեքթաթ տալավ քյնիլ թաջիրի գյո՛ւրգյը, խաղ անել նրա բեղերավը և ու՛-րա՛ն սիրիլ տալ, բղերան փռնել, պաչիլ... դե խոխա յա, հինչ ա՞ գյո՛նկդո՛ւմ։

Լա՛վ հաց կերեն, վեր կացեն, վեր քիչ դնջա՛նա՛ն, իսկ էս քյա՛-սիրն էլ ու՛րա՛ն կնգանը և տղայի հետ անցավ իրան տոնը։ Լոխ քոն ըլին, ամմա թաջիրին քոնը չտարավ։ Թաջիրին օչը-միտքը ընգալ ա էտ քյա՛սիրի տղեն յրա։ Թաջիրը մոտանըմ ա ու՛րա՛ն ծառաներից մեկին քնից եր կցնում, մի քսակ ոսկի տամ և ա-սըմ.—Էս քսակ ոսկին տար տոք էտ քյասիրին և ասե.—Էտ ոսկին եր կալ, էտ խոխան ինձ տոք։

Ծառան քսակը տանըմ ա քյա՛սիրին քնից եր կացնում և նաղլ անըմ թաջիրի խնթիրքը։ Էս քյա՛սիրը ասըմ ա.—Ա՛յ բալամ, պա մին խոխա յա, էլ օնինքյ վեչ, հունց տա՞մ։

Էս քյա՛սիր տղեն կնեգյը շատ խելունք ա ընում։ Ասըմ ա.—Ա՛յ մարթ, պեր խոխան տանք թաջիրին, նրա համար, վեր մունք քյա՛սիր ենք, թաջիրի ոսկավը տուն կշինենք, համ էլ թաջիրը մեծ մարթ ա, սուվար ա տանում, համ էլ նա խոխին ուսում կտա, համ էլ մունք ջա՛հիլ ընք, էլի խոխա կունենանք։

Վերջապես մարթը և կնեգյը մասլահաթ ըն կյա̈լիս ու խոխան տամ Թաչիրին։

Թաչիրը քյարվանի առաջին օղտեն նստած, քնած խոխան խտտած ճանապարհվում ըն։

Քշերվա կեսից անց լո̈նսը մոտ քյարվանը հսնում ա մին ծմակ։ Էս ծմակըմը Թաչիրը հիշում ա, վեր ո̈ւրան ճակատակյիրում կյրված ա, որ ըլածը մին քյասիբի խոխա բիդի օտե։ Էս հիշիլա̈վ, Թաչիրը ծառային կանչըմ ա և ասըմ.

—Էս խոխան տար ծմակըմը մորթե և եքյ։ Ծառան խոխան խտտած ծմակավը պատառ քյինո̈ւմ ա և մտածըմ.—Տեր աստված, էս անմեղ քյո̈րփա̈ն հինչ մե՞խկ օնե, որ ես մորթիմ։

Ծառան խոխան տնո̈ւմ ա մին ծառի փչակում և ետ կյամ հասնում քյարվաննին։ Թաչիրը հարցնում ա՝ ռադ արի՞ր։ Ծառան պատասխանըմ ա.—Հա՛, Թաչիրը ապրած կենա, հրամանըտ կատարված ա։ Թաչիրը ծառայի զահմաթհախին մի հափուռ ոսկի յա տամ և ասըմ.—Լավ, նստե օղտըտ, քյնինքյ։

Թող Թաչիրը քյըրվանավը քյնի, իսկ մունք խոսինքյ էտ քյա̈սիբից։ Լո̈ւսը պեցվում ա, քյա̈սիբը և ո̈ւրա̈ն կնիկը լա̈ց ըն ըլնո̈ւմ, մորը ծծերը օռչըմ ա և վերջապես կնեգյը մարթին ասըմ ա.—Ա՛յ մարթ, խոխան կորցրենքյ, ամմա փառք աստծու, Թաչիրը բոլ ոսկի յա տվալ, քյնի մի քանե ուստա եր կալ, քյնի ծմակը, տան փադեր կտրիլ տոք, վեր մին տոն շինինքյ։

Էս քյա̈սիբ տղան մի վեց-օխտը ուստա մարթ եր կալած քյնո̈ւմ ա ծմակը։ Ուստալարը ըսկսում ըն փադ կտրելը, իսկ էս տղան ծմակումը տխուր ման ա կյամ և թո̈նրդա̈ն ընգուճավը մի խոխի լա̈ցի սա̈ս ա ըղնում։ Էս լա̈ցի սա̈սին քյա̈սիբը քնո̈ւմ տեսնըմ ա ուրա̈ն խոխան ծառեն փչակըմը։ Էս քյասիբը խոխան յոր ա օնըմ, կյամ տոն։ Դե, ա՛յ կարթացող, տու մտածե, թա էս տանը հինչ ուրախություն կինի։ Համ խոխան ճարած, համ էլ ոսկի ըստացած։

Էս քյա̈սիբը Թաչիրի տված ոսկովը մին գյեղեցիկ պալատ ա շո̈ինո̈ւմ, հյաթըմը լա̈վ քյա̈հրիզ տո̈ւս քցո̈ւմ, հայաթի չորս կողմը հասար քաշում և քու արտի օղածի պես հարստանում։

Էս դեպքից դո̈ւզ քսան տարե հետո էս գյոռբագյոռ Թաչիրը նորից ո̈ւրա̈ն քյըրվանավը կյամ ա էլլհա էս հյաթըմը վեր կյամ, վեր հանգստանա։ Ամմա վեչ Թաչիրն ա ճնա̈նչըմ էս քյո̈հնա̈ քյա̈սիբին, վեչ էլ քյա̈սիբն ա ճնա̈նչըմ Թաչիրին։ Եթե առաջվա կյա̈լա̈վը Թաչիրն ա էս տղեն հացի համեցեք արալ, իսկ մեհենդյ

Էս քյո՞հնա քյասիբն ա Թաջիրին իրան ծառաներավը ղոնաղ կանչըմ և օղտերին կորմը տամ ու լա՜վ տեղավորում։

Լա՜վ տոն, ճանապար եկած սոված մարթիքյ։ Ուտում, խմում, լա՜վ քյեփ ըն անըմ։ Հացից հետո լո՜խ քյնո՛ւմ ըն քնում, ամմա Թաջիրը և էն քյո՞հնա քյա՛սիբը սկսում ըն զրո՛ւց անելը։

Թաջիրը հրցնում ա, ասըմ ա հի՞նչ կա՞, հինչ չկա՞, հունց ը՞ն ապրում ծեր ժղովուրթը և շատ զրո՛ւցներ։ Զրո՛ւցի վախտը Թաջիրը խոսում ա հարուստից, քյա՛սիբից և ասըմ ա, վեր, լա՜վ հարըստություն օնիս, քեզ հալալ լինի, լա՜վ ես աշխատել։ Էս խոսկի յրա էն քյո՞հնա քյասիբը ասըմ ա.—Թաջիր ախպեր, էս աշխարքըմը հարուստներից անպետք, խեղճը պակաս և ջանավար մարթ չկա։ Թաջիրը զարմացած հարցնում ա.—Արա խե յը՞ս իտի հարուստներին անիծում, չէ՞ վեր տու էլ պակաս հարուստ չըս։ Քյո՞հնա քյասիբը ըսկսում ա պատմել էն, հինչ քսան տարե առաջ ի՛րա՛ն խուլխեն պատահալ ա և վերջըմը ասըմ ա.—Էն Թաջիրը, վեր իմ խոխան տարալ ա, նա խեղճը պակաս մարթ ա ըլա՛լ։ Համել ասըմ ա.—Եթե նրան խոխա պետք չի, հոր ա՞ իմ խոխան տանըմ ծմակըմը թողում և կյո՛ւլի փայ շինում։

Թաջիրը նոր ա հիշըմ, վեր էս խոխա տանողը ինքյն ա ըլա՛լ և ըսկսում ա տխրվել ու քյեփը խարաբ ա ընո՛ւմ։ Թաջիրը կզնըված, տխուր նստած ոչ խոսում ա, ոչ ասըմ։ Էս տղան հարցնում ա.—Թա՛ջիր ախպեր, հինչի՞ քյեփըտ խարաբ ըլա՜վ։ Թաջիրը մին քիչ սուս ա կենում և հրցնում.—Էն տղան հոր ա՞։ Հայրը բաղասխանըմ ա.—Էն ա հա՜նդո՛ւմը, շուտով կըկյա՜ և հրցնում ա.—Հինչ ը՞ս անըմ։ Թաջիրը ասըմա.—Առուտրական գործես դա՜վթա՛րը մնացալ ա մեր շենումը, մի ծի առնիմ՝ նստե քյնի պիրի։ Էս քյասիբը ասըմ ա.—Մեզ ծի ունենքյ, մեր ծիյովը կքյնի, քու ծի առնելը հա՜ջա՛թ չի։

Էս զրուցի վախտը էն քյասիբի քսան տարեկան տղան մտնում ա, կլե՛խ տամ Թաջիրին, բարևում, ծեռքը պաչըմ և նստում։ Քյա՛սիբը իրեն տղեն ասըմ ա Թաջիրի դավթարի մասին և տղան շատ սիրով ընթունում ա Թաջիրի խնթիրքը կադարել։ Թաջիրը մի թոխտ ա կյրո՛ւմ իր կնգանը. «Ա՛յ կնիկ, քեզ մոտ եմ ուղարկում մի ջահիլ տղա, եկավ թէ չէ, կանչիր մեր ծանոթ ղասաբ Իսային և թող կտրի նրա գլուխը ու էնպես կորցնի, որ ոչ ոք չիմանա»։

Թաջիրը թուխտը կյրո՛ւմ ա, էն տղեն փափաղեն կլխեն ղաթը կոխում։ Տղան ծին նստում ա և հղե ըղնում։ Շատ ա քյնո՛ւմ թա խըրեգյ, հարց-փորց ընելավ առավոտը հա՛լա քիչ քշեր մնացած հասնըմ ա Թաջիրին հայաթը, տեսնըմ Թաջիրին տանը զերթուն

մարթ չկա, ծին քաշըմ ա կյոմը, կապում, խոտ տամ և պցրձնըմ բալկոնեն մին թախտու յրա քնում։ Քիչ հետո ծաքյը քցո՛ւմ ա, էն թախտը վերին յրա քյասիրի տղան պառկած ա, էն թուշի օթաղից թաջիրի աղջիկը տեսնում ա, վեր մին սիրուն տղա էն ա պարանց ընգած։ Մոտանըմ ա, վեր մին լա՛վ տեսնա, նկատում ա փափաղին վրա թոխտը։ Թոխտը թաքուն հանըմ ա, օթաղըմը կա՛րթըմ, ճղում թող անըմ և նորից գրում. «Ա՛յ կին, քեզ մոտ եմ ուղարկում մի ջահել տղա, եթե աղջիկս հավանի, պսակիր և թող մեզ մոտ մնա մինչև գալսս։ Թաջիրի աղջիկը թոխտը նորից ծածուկ կոխում ա տղայի փափաղի վերևի մասը։ Վերջապես լո՛ւսանըմ ա, թաջիրի կնիկը վեր ա կենում, տեսնըմ, մի տղա իրենց բալկոնի թախտին քնած։ Վեր ա կացնում քնած տեղից և հարցնում, թե հով ա՞։ Միամիտ և կյիր չիմացող տղան թաջիրի թոխտը փափաղան հանըմ, տամ ա խանըմին։ Խանըմը կա՛րթըմ ա և արդեն ուրիշ տեսակ ա ումթումում։ Թաջիրի կինը կանչում ա բոլոր հարևաններին և պարիկամներին, կարթըմ մարթին կյրած թոխտը և ախճկանը հարցնում.—Ի՞նչ ես ասում հորդ։ Աղջիկը պատասխանում ա.—Ես ամուսնանալու միտք չունեմ, դե հերս վեր ասըմ ա, նրա խոսկը կոտրել չըմ։

Տահանց փսակըմ ըն, լա՛վ ուտում-խմում՝ փսեն, հարնանը կյենացը խմում։

Մին տարեն չըրացած, էս թաջիրի ախճիկը մին լա՛վ տղա բախա յա ծնում։ Ուղիղ մի տարի եա խաբարը հասնըմ ա, վեր թաջիրը ո՛նրձն քյարվանավը կյամ ա։ Ժղվուրթեն նհետ թաջիրին կնեգյը, փեսան, աղջիկը քյնո՛ւմ ըն, վեր թաջիրին դիմավորին։ Թաջիրը տեսնըմ ա ո՛նրան փսեն, թոռնանը և կնգանը հրցնում ա.—Էս հով ա՞, կնիկը ասըմ ա.—Քու փեսան ա, էս էլ քու թոռնը։ Թաջիրը գձատին գյո՛ւղո՛ւմ ա, վեր էս օյինը ո՛նրձն ախճիգյն ա սարքալ։

Վերջապես կյամ ըն տոն։ Թաջիրը որոշում ա հինչ օղըմ ա ինի, էտ քյա՛սիրի տղեն կլթխը ոտե։ Նա քյնո՛ւմ ա համամը, վեր լղանա, ամմա համամչուն ասըմ ա.—Քյո՛նկքյըս թողում ըմ քշտիտ, մին տղա յա կյլա՛կան, վեր եկավ թա չէ, կոխիր կրակեն մաչը։

Համամչին ռազի յա կենըմ, մի քանի մանեթ էլ ըստանըմ թաջիրից։ Թաջիրը լղանըմ ա հմամումը և կյամ տոն։ Կյամ ա թա չէ, փեսան ջհո՛ւմ ա։ Ասում ա.—Փեսա ջան, քյո՛նկքյըս թողալ ըմ համամումը, քյնա՛ պիր։ Փեսան միկա քյնո՛ւմ ա, թաջիրի մեծ տղան պտահըմ ա և հարցնում.—Փեսա, ո՞ւր ես գնում։ Փեսան ասըմ ա.—Պապան քյո՛նկքյը թողալ ա հմամումը, քյնո՛ւմ ըմ պի-

րիմ։ Թաշիրի տղան կզնվում ա և ասըմ.—Տու խոխա լըս, վեր քեզ իտի պենի հետե ղարկըմ ա, ետ քյնի, ես կքյնիմ պիրիմ։ Տղան քյնում ա Թա չէ, համամշին փռնում ա կոխում համամի ղզղանի կրակի տակը։

Փեսան տուն գալով, հանեբը հարցնում ա.—Քյուլքյը բերա՞ր։ Փեսան ասըմ ա.—Չէ՛, ձեր տղան ինձ ետ տվ-ավ և քյեցավ ընքյր պիրի։ Թաշիրը կատաղած վազ ա տամ և հռնանցե ծեն տամ հա-մամշուն.—Համամշի՛, համամշի՛։ Իսկ համամշին կարծըմ ա, Թա ասըմ ա ճեղի ըրա և հռնանցե բաղասխանըմ ա.—Թաշիր վա-խելմիր, հետը-թեփուռը մա՛հըլըմ չի։ Թաշիրը կրկին կատաղած քյնում ա մի ղասաբի մոտ և ասում.—Քեզ մոտ մի տղա պիտի կյա միս առնելու, եկավ թե չէ, կոնդը կտրե, քցի վերը։

Էս անքամ էլ Թաշիրի փոքր տղան է փեսային միս առնելուց ետ տամ և ինքը գնում է, թե չէ, ղասաբը պիծի տղեն քյո՛վլք պի-րողի գլխին եկած օյինն ա սարքում՝ կտրում ա կլո՛խը և գցում վերը։

Թաշիրը շատ ու շատ նեղն ա ընկնում և գալիս է տուն։ Նա մի թոխտ ա կյրո՛ւմ էսպես. «Իմ եղած-չեղածը, շարժվող և չշարժ-վող գույքը, կտակում եմ էս քյա՛սիբ տղին և հալալ ըմ անըմ, որովհետև էսպես ա իմ ճկատակյիրը»։

Գրում է թե չէ, մի ըստաքան օխծի լեղ յա խմում և սատ-կում։ Աղքատի տղան մինչև էսօր ուտում-խմում է Թաշիրի հա-րըստությունը և վայելում նրա մարալ աղջիկը։